



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՔԱՂԱՔ ՊՈՆՏԻՎԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ

ՔԱՂԱՔ ՊՈՆՏԻՎԱՅԻ

ՆԱԽԱՐԱՐ

«» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԱՅՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 69

Զեռնարկողը՝

<<ՄԵՐՁԱՊՈՍԿՈՎՅԱՆ>> ԲԲԸ

Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն

Գործունեությունը՝

Կառնուպի անդեգիբների հանքավայրի /ընդլայնում և
ժամկետի երկարաձգում/ արդյունահանման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեդրվություն
Շիրակի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի Ժ/Ա՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՍՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՍՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 69

«16 » 08 2018թ.

Կառնուտի անդեգիտների հանքավայրի /ընդայնում և ժամկետի երկարացում/ արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Կառնուտ համայնք

Կառնուտի անդեգիտների հանքավայրը գտնվում է Շիրակի մարզում Ախուրյանի տարածաշրջանում: Այն տեղադրված է Կառնուտ գյուղից 1,5կմ հյուսիս-արևելք, Ախուրյան քաղաքից 6կմ հյուսիս-արևելք և Գյումրի քաղաքից 11կմ դեպի հյուսիս-արևելք:

Շիրակի մարզի Կառնուտի անդեգիտների հանքավայրի անդեգիտների պաշարները A+B+C₁ կարգերով 10101,0հազ.մ³ քանակով հաստատվել են ՀՍՍՀ Երկրաբանական վարչության ՊՏՀ-ի 27,05,1982թ, N259 արձանագրությամբ:

Հանքավայրը 2011թ-ից շահագործվում է «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից թիվ 135 ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

Ներկայացված նախագծով նախատեսվում է.

- «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի բացահանքի սահմաններ ընդլայնում, շահագործման ժամկետի երկարաձգում՝ 50 տարի:
- Արդյունահանված անդեգիտների փխրեցված զանգվածի տեղափոխում մինչև 1.1կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս, որը գտնվում է հանքավայրի հարավ-արևամտյան մասում:
- Մակարացման ապարների տեղափոխում նախկինում մշակված տարածություններ, փորում և հարթեցում լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով:
- Փոշեառաջացման օջախների ինտենսիվ ռոռոգում:
- Բացահանքը և արդյունաբերական հրապարակը հարող տարածքների կանաչապատում:
- Նախկինում շահագործված հանքավայրի տարածքը կազմում է 3.3հա, իսկ ընդլայնվածը՝ կազմելու է 13,0հա, տրամադրված հաշվեկշռային պաշարների քանակը՝ 2756,0հազ.մ³, արդյունաբերական պաշարների քանակը՝ 2499,57հազ.մ³.



- Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 50,0հազ.մ³ անդեգիտների զանգված:

Իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով հանքավայրի անդեգիտները բավարարում են ՀՀ ՀՍՏ 1102-79 պահանջներին «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից»:

Համախառն նմուշների փորձարկումների արդյունքում ապացուցվել է անդեգիտային խճի պիտանելիությունը շինարարական աշխատանքների համար (ըստ 8367-75 ԳՈՍ) և որպես լցանյութ՝ “100”-“350” մակնիշի ծանր բետոնների համար:

Փաստացի տվյալներով շինարարական քարի բլոկների միջին ելքը կազմում է 25,4%:

Հանքավայրում մնացորդային պաշարները 01.01.2018թ դրությամբ կազմում են 9606136մ³:

Բացահանքի տարածքում անդեգիտներից բլոկների արդյունահանելու համար նախատեսվում է բացահանքը մշակել 5մ բարձրությամբ հանքաստիճաններով, որոնք վերջնական դիրքում թույլատրվում է կրկնապատկել դարձնելով 10մ բարձրությամբ աստիճաններ, թողնելով անփոփոխ կողերի և հանքաստիճանների թեքման անկյունները:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 790մ,
- առավելագույն լայնությունը – 300մ,
- ամենավերին և ամենաստորին նիշերի միջև եղած տարբերությունը -120մ,
- հանքաստիճանի բարձրությունը վերջնական դիրքում -10մ,
- հանքաստիճանի թեքման անկյունը – 65°,
- անվտանգության բերմայի նվազագույն լայնությունը – 3,5մ,
- կողի թեքման անկյունը – 55°:

Բացահանքային դաշտի շահագործման ընթացքում հաշվարկված են հետևյալ կորուստները.

1. Ընդհանուր բացահանքային կորուստներ, որոնք կախված են հանքավայրի լեռնաերկրաբանական պայմաններից: Դրանք այն կորուստներն են, որոնք պահպանիչ բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են 256,43հազ.մ³ կամ 9,3%:
2. Շահագործական կորուստները վերագրվում են մարվող պաշարներին և պայմանավորված են պայթեցման աշխատանքների ժամանակ տեղի ունեցող կորուստներով, որոնք ըստ ՆՏՏ-ի ընդունված են 0.5%:

Քանի որ նախագծվող բացահանքի տարածքն ունի տեղանքի թեք ռելիեֆ (25-30°), ապա բացահանքի (1850-1740մ) ամեն մի աշխատանքային հորիզոննի (հանքաստիճանի) բացումը կատարվում է մերձատար ավտոճանապարհից (որը կապում է բացահանքը մշակման արտադրամասի և արտադրական հրապարակի հետ) բացող հորիզոնական կիսախրամի անցումով: Բացող կիսախրամի նվազագույն լայնությունը հիմքի մասում ընդունված է 12,0մ:

Լեռնային աշխատանքները կարգաբերելու համար նախատեսվում են հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները:

1. Բացահանքի հարավային մասից 1720մ նիշ ունեցող հորիզոնից, բացահանքի արևմտյան և հյուսիս-արևմտյան մասով, մինչև բացահանքի 1855մ նիշ ունեցող հանքաստիճանը մերձատար ավտոճանապարհի կառուցում, $L=1500\text{m}$, $b=10\text{m}$, $i = 10\%$, $V = 20100\text{m}^3$:

2. Հանքաստիճան 1850մ-ում նախատեսվում է,

- մակարացման ապարների հեռացում – 50մ³,

- անդեգիտների զանգվածի մշակում – 2580մ³ (ուղեկցող հանույթ),

3. Հանքաստիճան 1845մ-ում նախատեսվում է,

- մակարացման ապարների հեռացում – 70մ³,

- անդեգիտների զանգվածի մշակում – 4400մ³ (ուղեկցող հանույթ),

4. Հանքաստիճան 1840մ-ում նախատեսվում է,

- մակարացման ապարների հեռացում – 100մ³,



- անդեզիտների զանգվածի մշակում – 5400մ³,
- 5. Հանքաստիճան 1835մ-ում նախատեսվում է,
- մակաբացման ապարների հեռացում – 60մ³,
- աշխատանքային հրապարակի ստեղծում – 6000մ³ (ուղեկցող հանույթ):

Լեռնանախապատրաստական աշխատանքների ժամանակ մշակվող ապարների ծավալները վերագրվում են բացահանքի շահագործման առաջին տարվան:

Մակաբացման աշխատանքները նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում հիմնականում ներկայացված են ժամանակակից առաջացումներով (անդեզիտների բեկորների պարունակությամբ ավագակավերով և կավավագներով):

Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է բուլղողեր C-170, էքսկավատոր Կամացу PC-300, ավտոհնձնաթափ ԿրԱ3-256Ե լեռնատրանսպորտային համալիրով, էքսկավատորի վերևից շերեփելու սխեմայով:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը կատարել միակողմանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարները նախկինում մշակված տարածություններ տեղափոխելով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. Աստիճանի բարձրությունը՝
 - աշխատանքայինը - 5մ,
 - վերջնական դիրքում (հանքաստիճանների մարումից հետո) – 10մ:
2. Հանքաստիճանի թեքման անկյունը՝
 - աշխատանքայինը - 75°,
 - վերջնական դիրքում (մարումից հետո) – 65°:
3. Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը – 25,0մ:
4. Ընթացքաշերտի լայնությունը – 15մ:
5. Լեռնային աշխատանքների ուղղությունը արևմուտքից-արևելք:

Նախնական փիրեցումը նախատեսվում է կատարել հորատանցքային լիցքերի եղանակով: Պայթեցման աշխատանքները պետք է կատարվեն լիցենզավորված հատուկ կազմակերպությունների կողմից:

Օժանդակ աշխատանքների համար (հանքաստիճանների հատակի հարթեցում, արտաչափ կտորների տեղափոխում ու կուտակում, ճանապարհների կարգավորում) էքսկավատորներին կցվում է 1 հատ C-170 մակնիշի բուլղողեր:

Բացահանքի ջրանատակարարումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուր բերվելու է կցովի ջրի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է KО-002 մակնիշի ջրան լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի օրեկան ծախսը հաշվարկված է 1 մարդու համար 0.25լ (0.025մ³), տեխնիկական ջրինը՝ 0,5լ/մ², հանքախորշը խոնավացնելու համար՝ 30.0լ/մ³:

Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների համաձայն գետնաջրերը բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակուտիների և ճեղքերի միջոցով:

Խախտված հորերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի ընթացքում նախատեսվում է նախկինում մշակված տարածություններում պահեստավորված 10930մ³ մակաբացման ապարների (բերվածքային ապարներ), փոռում ու հարթեցում:

Մակաբացման ապարների փոռումը և հարթեցումը կատարվում է C-170 բուլղողերով:

Մշակված տարածքների ռեկուլտիվացված տարածքը կազմում է 5,5հա: Ռեկուլտիվացիայի իրականացման համար անհրաժեշտ ծախսը կազմում է 1314.5հազ. դրամ:

Իր գործունեության ընթացքում ընկերությունն իր ներդրումներն են ունենալու ազդակը համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:



Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և նշակույթի հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուժիղացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Փոշենստեցման նպատակով ճանապարհներին նախատեսվում է ջրցանում տարվա չոր և շոգ օրերին:

- Մերենաների աշխատանքի ժամանակ՝ սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով: Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:

- Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

- Արտադրական իրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում: Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՐԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Կառնուտ համայնքում իրակնացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ քնապահպահապանության նախարարության ստորաբաժննումները: Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> փորձաքննության դրական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:



2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Գործունեության իրականացման արդյունքում առաջացած թափոնների (օգտագործված յուղեր, քսայուղեր, հնամաշ դետալներ և այլն) կառավարումն ու շինարարության ավարտից հետո առաջացած շինադրի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մերձմուկովյան>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված Կառնուտի անդեգիտների հանքավայրի /ընդլայնում և ժամկետի երկարացում/ արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Մասնագետ՝



Ա. Ղոնոյան

Զ. Զուրոնաչյան